ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29 հունիսի, 2018թ. Երևան

6 նախարարության հետ համագործակցության պայմանվորվածություն ձեռքբերվեց թիրախային ոլորտներում ծրագրերի իրականացման համար

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ներկայացուցիչները հունիսի 12-26-ը հանդիպումներ ունեցան 6 նախարարությունում՝ ծրագրի կողմից ֆինանսավորված դրամաշնորհային ծրագրերի ներկայացման և երկկողմ արդյունավետ համագործակցության պայմանավորվածության ձեռքբերման նպատակով:

Նշենք, որ 9 թիրախային ոլորտում ծրագրերի իրականացման համար մինչև 25 միլիոն դրամի դրամաշնորհներ են հատկացվել քաղհասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կոալիցիաներին՝ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում:

Տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանին ներկայացվեց «Բյուջե բոլորի համար» և «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրերը, որոնք իրականացվում են «Վիններթ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցը և «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում» կոալիցիան:

«Շատ ուրախ կլինենք համագործակցության համար, մենք շատ կարևորում ենք նաև մարզային կազմակերպությունների ներգրավվածությունը և մասնակցությունը»,- նշեց նախարար Սուրեն Պապիկյանը:

Գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանին ներկայացվել է ծրագրի «Մասնակցային քաղաքականություն, կայուն գյուղատնտեսություն» ծրագիրը, որն իրականացնում է Հայաստանի գյուղատնտեսական դաշինքը:

«Մենք կարևորում ենք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությունը, հատկապես այդ համագործակցյունը շատ կարևոր է մոնիթորինգի իրականացման հարցերում: Ծրագրի իրականացումից սպասում ենք ստանալ ռեալ արդյունքեր»,- նշեց նախարար Արթուր Խաչատրյանը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մանե Թանդիլյանի հետ հանդիպմանը ներկայացվեց «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագիրը, որն իրականացվում է Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիան: Նախարարը նշեց, որ այս ծրագրի իրականացման համար պետք է համագործակցություն լինի նաև առողջապահության և կրթության նախարարությունների հետ.

«Առանց միմյանց հետ արդյունավետ աշխատանքի՝ արդյունք չենք ունենա: Եթե մենք այսօր չունենք այնպիսի արդյունք, որը կուզեինք տեսնել, դա այն պատճառով է, որ մինչ այժմ չենք ունեցել փոխադարձ արդյունավետ համագործակցություն: Եթե քաղաքացիական հասարկությունը ևս հարթակ լինի մեր համագործակցության համար, ապա մեր աշխատանքը շատ օգտակար կլինի»,- ասաց նախարար Մանե Թանդիլյանը:

Կրթության և գիտության փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանի հետ հանդիպմանը ներկայացվեց և քննարկվեց «Սոցիալական գործընկերություն և կրթություն. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» ծրագիրն ու դրա շրջանակներում անելիքները: Հանդիպման ավարտին կողմերը որոշեցին պարբերաբար հանդիպումներ կազմակերպել՝ քննարկելու ու ներկայացնելու կատարված աշխատանքները:

Համագործակցության պայմանավորվածություններ են ձեռքբերվել նաև ֆինանսների առաջին փոխնախարար Կարեն Բրոտյանի հետ հանդիպմանը, որի ժամանակ ներկայացվեց «Բյուջե բոլորի համար» ծրագիրը, ինչպեսև էներեգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ. աշխատակազմի ղեկավար Արտաշես Կիրակոսյանը հայտնեց, որ պատրաստակամ են ստեղծել աշխատանքային խումբ և անմիջական հանդիպումների, քննարկումներ ունենալ, աջակցել ծրագրի իրականացմանը:

Նախարարների հետ հանդիպումների ժամանակ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը նշեց, որ ակնկալվում է թիրախային ոլորտներում ծրագրեր իրականացնող ՔՀԿ կոալիցաների հզորացումը և կառավարության համար կայուն գործընկեր, աջակից դառնալը:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող
Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝ info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: